ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2018-1-1-Ա

ք. Երևան 07.02.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի փետրվարի 7-ի նիստում քննարկեց 2017 թվականի դեկտեմբերի 18-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Apple Inc. (1 Infinite Loop Cupertino CA 95014) ընկերության «LIVE PHOTOS» (IR1287630) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, կետերի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ, 94-րդ կետի 3-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն, բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որը առևտրում ծառայում է ապրանքի տեսակը և այլ բնութագրեր նշելու համար և իրենից ներկայացնում է նկարագրական նշան: Տվյալ դեպքում «LIVE PHOTOS» ապրանքային նշանը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «կենդանի լուսանկարներ» չի կարող գրանցվել, քանի որ այն չունի տարբերակիչ հատկություն եւ նկարագրական բնույթի նշան է: «LIVE PHOTOS»՝ թարգմանաբար «կենդանի լուսանկարներ» արտահայտությունը օգտագործվում է տարբեր սուբյեկտների կողմից, ինչի մասին վկայում են համացանցից ստացված տեղեկությունները (https://petapixel.com, www.apple.com, www.xda-developers.com եւ այլն), ուստի այն պետք է հասանելի լինի համապատասխան դաշտում գտնվող այլ արտադրողների համար եւ դրա օգտագործման բացառիկ իրավունքը չի կարող տրվել որևէ անձի:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն ներկայացված ապրանքային նշանը չունի տարբերակիչ հատկություն և նկարագրական բնույթի է այն ապրանքների համար, որոնց համար ներկայացված է գրանցման: Նաև համացանցից ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ ներկայացված արտահայտությունը օգտագործվում է տարբեր սուբյեկտների կողմից և դրա օգտագործման բացառիկ իրավունքը չի կարող տրվել որևէ անձի:

Բողոքարկողը շարունակեց մնալ իր այն կարծիքին, որ ապրանքային նշանը կարող է գրանցվել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը իրավաչափ է:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ «LIVE PHOTOS» (IR1287630) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ